

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹՎԻ ԱՌՆՎԱԶՆ ՄԵԿ ՀԻՆԳԵՐՈՐԴԻ
ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 17-ՐԴ
ՀՈԴՎԱԾԻ «Գ» ԿԵՏԻ, 27-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2.1-ԻՆ ՄԱՍԻ, 52.1-ԻՆ ՀՈԴՎԱԾԻ 1-3-
ՐԴ ՄԱՍԵՐԻ ԵՎ «ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՄԱՐՄՆԻ
ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 36-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 9-ՐԴ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2026
ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 12-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈՒ-1819 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ «Էներգետիկայի մասին» օրենքի 17-րդ հոդվածի «գ» կետի, 27-րդ հոդվածի 2.1-ին մասի, 52.1-ին հոդվածի 1-3-րդ մասերի և «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 9-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2026 թվականի մարտի 12-ի ՍԴՈՒ-1819 որոշմամբ (հրապարակվել է 2026 թվականի մարտի 16-ին) որոշել է.

1. «Էներգետիկայի մասին» օրենքի 17-րդ հոդվածի «գ» կետը համապատասխանում է Սահմանադրությանը:

2. «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 2.1-ին մասը համապատասխանում է Սահմանադրությանը:


3. «Էներգետիկայի մասին» օրենքի 52.1-ին հոդվածի 1-ին, 2 և 3-րդ մասերը համապատասխանում են Սահմանադրությանը:

4. «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 9-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանը (...):

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2026 թվականի մարտի 12-ի ՍԴՈ-1819 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում եմ դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը՝ որոշման պատճառաբանական և եզրակահանգ մասերի վերաբերյալ:

Նախքան հատուկ կարծիքի պատճառաբանություններին անդրադառնալը՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանի դատավորը պարտավոր է մասնակցել քվեարկությանը և քվեարկել կողմ կամ դեմ Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը: Նույն հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-4-րդ և 7-րդ կետերով նախատեսված հարցերով որոշում կամ եզրակացություն ընդունելու օրվան հաջորդող տասնօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի դատավորը կարող է ներկայացնել հատուկ կարծիք որոշման կամ եզրակացության ինչպես եզրակահանգ, այնպես էլ պատճառաբանական մասի վերաբերյալ, որն անհապաղ հրապարակվում է Սահմանադրական դատարանի պաշտոնական կայքէջում, ինչպես նաև հրապարակվում է նորմատիվ իրավական ակտերի պաշտոնական հրապարակման օրենքով սահմանված կարգով և Սահմանադրական դատարանի տեղեկագրում:

Վերոգրյալ հոդվածի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանի կողմից որոշումներ և եզրակացություններն ընդունելիս քվեարկությանը մասնակցելը և Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը կողմ կամ դեմ քվեարկելը Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունն է:



Հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտերի՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննության արդյունքում Սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների (դրանցում արտահայտվող իրավական դիրքորոշումների) նշանակությունը իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայի համար՝ հանրությանը պետք է հասանելի լինեն այդպիսի գործով ընդունված որոշմանը Սահմանադրական դատարանի դատավորի անհամաձայնության պատճառները, իսկ օրենքով սահմանված է Սահմանադրական դատարանի դատավորի՝ ընդունված որոշումից տարբերվող դիրքորոշումը պաշտոնապես ներկայացնելու մեկ եղանակ՝ հատուկ կարծիք շարադրելը: Հետևաբար կարծում եմ, որ նշված գործերի քննության արդյունքում համապատասխան որոշման ընդունմանը դեմ քվեարկելու փաստից ուղղակիորեն բխում է հատուկ կարծիք ներկայացնելու՝ իմ՝ որպես Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունը, ինչով էլ պայմանավորված ներկայացնում եմ իմ հատուկ կարծիքը:

1. Անդրադառնալով «Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ «Էներգետիկայի մասին» օրենքի 17-րդ հոդվածի «գ» կետի, 27-րդ հոդվածի 2.1-ին մասի, 52.1-ին հոդվածի 1-3-րդ մասերի և «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 9-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով Սահմանադրական դատարանի կայացրած որոշման պատճառաբանություններին և եզրահանգմանը, հարկ եմ համարում նշել հետևյալը.

Նախևառաջ, կարևորելով էներգետիկայի ոլորտի նշանակությունը ժամանակակից պետության տնտեսական զարգացման, հասարակական կյանքի կազմակերպման և ազգային անվտանգության ապահովման տեսանկյունից, որի իրավական կարգավորումը պայմանավորված է ոչ միայն տնտեսական շրջանառության տրամաբանությամբ, այլև հանրային անվտանգության,

3


սոցիալական արդարության, շրջակա միջավայրի պաշտպանության և պետական ինքնիշխանության ապահովման առաջնահերթություններով, հայտնում են համաձայնությունս Սահմանադրական դատարանի 2026 թվականի մարտի 12-ի ՍԴՈ-1819 որոշման եզրափակիչ մասի 1-ին և 2-րդ կետերին և դրանց վերաբերյալ ներկայացված պատճառաբանություններին: Միաժամանակ, հայտնում են անհամաձայնությունս (սույն հատուկ կարծիքում նշված որոշակի դեպքերում նաև մասնակի անհամաձայնությունս) նշված որոշման 3-րդ և 4-րդ կետերի մասով, որոնց վերաբերյալ դիրքորոշումս կներկայացնեմ ստորև.

ԲԱԺԻՆ I

1.1. «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 9-րդ մասի, ինչպես նաև «Էներգետիկայի մասին» օրենքի 52.1-ին հոդվածի 1-ին և 2-րդ մասերի վերաբերյալ.

Վերոնշյալ դրույթների սահմանադրականության հարցն անհրաժեշտ են համարում քննարկման առարկա դարձնել Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) նախագահի իրավասությունը՝ միանձնյա կարգով վարչական վարույթ հարուցելու և կանխարգելիչ միջոցառումներ կիրառելու՝ Սահմանադրության 122-րդ հոդվածով ամրագրված՝ ինքնավար մարմինների գործունեության սահմանադրաիրավական հիմքը կազմող կոլեգիալության սկզբունքի երաշխավորման համատեքստում:

Այսպես՝ Սահմանադրության 4-րդ հոդվածն ամրագրում է իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը, որը ժողովրդավարական, իրավական պետությունում հանրային իշխանության կազմակերպման հիմնարար սկզբունքներից է:

Իշխանությունների բաժանման գործառույթային և ինստիտուցիոնալ համակարգում ուրույն դեր ունեն ինքնավար մարմինները, որոնց գործունեությունը

4


միտված է ապահովել առանձին հանրային նշանակություն ունեցող ոլորտների անկախ և արդյունավետ կարգավորումը:

Սահմանադրության՝ «Ինքնավար մարմինները» վերտառությամբ 122-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների իրականացումն ապահովելու, ինչպես նաև Սահմանադրությամբ սահմանված հիմնարար նշանակություն ունեցող հանրային շահերի պաշտպանության նպատակով պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված օրենքով կարող են ստեղծվել ինքնավար մարմիններ:

Վերոնշյալ դրույթից հետևում է, որ սահմանադիրն ինքնավար մարմինների ձևավորման սահմանադրաիրավական առաքելությունը պայմանավորել է երկու նպատակներով, այն է՝ (1) մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների իրականացման ապահովմամբ, ինչպես նաև (2) Սահմանադրությամբ սահմանված հիմնարար նշանակություն ունեցող հանրային շահերի պաշտպանությամբ: Սահմանադիրը միաժամանակ սահմանել է, որ ինքնավար մարմինների անդամները նշանակվում են պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ, և այդ մարմինների լիազորությունները, անկախության երաշխիքները, անդամներին ներկայացվող պահանջները և գործունեության կարգը սահմանվում են օրենքով¹:

Սահմանադրության 122-րդ հոդվածի իմաստով՝ ինքնավար մարմին է հանդիսանում նաև Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող Հանձնաժողովը, որի ստեղծման և գործունեության կարգը, լիազորությունները և անկախության երաշխիքները սահմանվել են «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքով:

Հանրային ծառայությունների ոլորտում կարգավորումն իրականացնող Հանձնաժողովի ձևավորումը նպատակ է հետապնդում ապահովել

¹ Սահմանադրության 122-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասեր:



Սահմանադրությամբ սահմանված հիմնարար նշանակություն ունեցող հանրային շահերի պաշտպանությունը: Ըստ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի՝ նշված ոլորտն իր մեջ ներառում է, ի թիվս այլնի, նաև էներգետիկայի բնագավառը, որը ներառում է էլեկտրաէներգետիկական, ցերմամատակարարման, գազամատակարարման համակարգերը²: Հանրային ծառայությունների ոլորտում կարգավորումը պետական քաղաքականության մի մասն է, որի նպատակն է կարգավորող մարմնի կողմից օրենքներով սահմանված իր իրավունքների և պարտականությունների իրականացմամբ հավասարակշռել սպառողների և հանրային ծառայությունների ոլորտում կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց շահերը, կարգավորվող անձանց համար ստեղծել գործունեության միատեսակ պայմաններ, նպաստել մրցակցային շուկաների ձևավորմանն ու զարգացմանը և խթանել ռեսուրսների արդյունավետ օգտագործումը³:

Սահմանադրության 122-րդ հոդվածի 2-րդ մասից և «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի կարգավորումներից հետևում է, որ Հանձնաժողովը կազմված է հինգ անդամից՝ հանձնաժողովի նախագահից և չորս անդամից, ովքեր նշանակվում են Ազգային ժողովի կողմից՝ հինգ տարի ժամկետով⁴: Այսինքն՝ Հանձնաժողովի նախագահը և մյուս անդամները նշանակվում են նույն սահմանադրաիրավական ընթացակարգով և ունեն համահավասար սահմանադրաիրավական կարգավիճակ: Բացի այդ, նշված ինքնավար պաշտոնների թեկնածուներն առաջադրվում են տարբեր սուբյեկտների

² տե՛ս՝ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը:

³ տե՛ս՝ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասը:

⁴ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր:

6


կողմից՝ Կառավարության, Ազգային ժողովի կառավարող և ընդդիմադիր խմբակցությունների կողմից⁵:

«Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի կարգավորումներից հետևում է, որ Հանձնաժողովը, ի թիվս այլնի, ընդունում է նաև որոշումներ, իսկ այդ որոշումները համարվում են ընդունված, եթե դրանց կողմ է քվեարկել հանձնաժողովի առնվազն երեք անդամ⁶: Միաժամանակ սահմանվում է, որ Հանձնաժողովը՝ որպես ինքնավար պետական մարմին, **ինքնուրույն է իր իրավասություններն իրականացնելիս**⁷: Իսկ որպես կարգավորման հիմնական սկզբունք, ի թիվս այլնի, նախատեսվել է նաև կարգավորող մարմնի որոշումների ընդունման **կոլեգիալությունը և անկախությունը**⁸:

Այսպիսով, ելնելով Հանձնաժողովի գործառույթային և ինստիտուցիոնալ առանձնահատկությունների վերաբերյալ սահմանադրի և օրենսդրի կողմից նախատեսված դրույթների համալիր բովանդակությունից՝ գտնում ենք, որ Հանձնաժողովի գործունեության հիմքը կազմում է կոլեգիալության սկզբունքը, որը կոչված է ապահովելու հանրային նշանակություն ունեցող գործառույթների արդյունավետ իրականացումը՝ սուբյեկտիվիզմի ու կամայականությունների դրսևորման բացառման, բազմակարծության, օբյեկտիվիզմի բարձր մակարդակի երաշխավորման պայմաններում:

Սահմանադրական դատարանն իր՝ 2017 թվականի նոյեմբերի 10-ի ՍԴՈ-1384 որոշմամբ, անդրադառնալով «կոլեգիալություն» եզրույթի սահմանադրահիրավական բովանդակության բացահայտմանը, արձանագրել է հետևյալը. «(...)

⁵ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մաս:

⁶ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասեր:

⁷ տե՛ս՝ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը:

⁸ տե՛ս՝ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը:

կոլեգիալությունը կառավարման սկզբունք է, որի պայմաններում ղեկավարումն իրականացվում է մի խումբ լիազորված անձանց կողմից: Կոլեգիալության կարգով որոշումների կայացումը ենթադրում է կարծիքների նախնական քննարկում և կոլեկտիվ քննարկման արդյունքում պաշտոնական փաստաթղթի մշակում ու ընդունում:

(...) Կոլեգիալ կառավարման անհրաժեշտությունը, մասնավորապես, նպատակ ունի բազմակարծության ապահովման (2015թ. փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդված), սուբյեկտիվիզմի և կամայականության հաղթահարման, ինչպես նաև հանրության օբյեկտիվ շահերի առավել արտահայտման միջոցներով երաշխավորել տվյալ մարմնի առջև Սահմանադրությամբ և օրենքներով առաջադրված հանրային կարևորություն ունեցող գործառույթների արդյունավետ իրականացումը»:

Այսպիսով, գտնում եմ, որ կոլեգիալության սկզբունքը հանդիսանում է որպես ինքնավար մարմինների ինքնավարության, գործունեության արդյունավետության և հաշվետվողականության ապահովման կարևոր երաշխիք: Այն ապահովում է, որ տվյալ մարմնի ընդունած որոշումները ձևավորվեն անդամների համատեղ քննարկման արդյունքում՝ արտահայտելով ոչ թե առանձին անդամի, այլ մարմնի հավաքական կամքը:

Ուստի և՛ սահմանադրի, և՛ օրենսդրի կողմից այս սկզբունքի ամրագրման կարևորությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ Հանձնաժողովին վերապահված են հանրային նշանակություն ունեցող այնպիսի կարևոր լիազորություններ, որոնց իրականացումը պահանջում է բազմակողմանի և հավասարակշռված ինստիտուցիոնալ մոտեցում: Հետևաբար Հանձնաժողովի լիազորությունների իրականացումը չի կարող պայմանավորված լինել առանձին պաշտոնատար անձի կամքով կամ միանձնյա որոշմամբ: Հակառակ մոտեցումը կարող է հանգեցնել այնպիսի իրավիճակի, երբ հանրային նշանակություն ունեցող որոշումների ընդունումը կախված կլինի մեկ անձի կամքից՝ նվազեցնելով

8


որոշումների նկատմամբ հանրային վստահությունը: Ուստի Հանձնաժողովի գործունեության, այդ թվում՝ որոշումների կայացման առնչությամբ կոլեգիալության սկզբունքի սահմանումը ձևավորում է զսպումների և հակակշիռների ներքին մեխանիզմ, որի միջոցով կանխվում է կամայականությունների դրսևորումը և ապահովվում է Հանձնաժողովի գործունեության նկատմամբ հանրային վստահությունը:

Վերոգրյալից ելնելով՝ գտնում եմ, որ Հանձնաժողովի գործունեության, այդ թվում՝ որոշումների կայացման ընթացակարգերի վերաբերյալ օրենսդրական կարգավորումները պետք է ապահովեն կոլեգիալության սկզբունքի արդյունավետ իրացումը: Մասնավորապես՝ օրենսդիրը պետք է Հանձնաժողովի գործունեության, այդ թվում՝ որոշումների կայացման ընթացակարգերի վերաբերյալ համապատասխան կարգավորումները սահմանի այնպես, որ այն որոշումները, որոնք իրենց բնույթով լիցենզավորված անձի իրավունքների նկատմամբ առաջացնում են ինտենսիվ միջամտություն, ընդունվեն կոլեգիալ քննարկման և քվեարկության արդյունքում: Նման մոտեցումը մի կողմից՝ կապահովի Հանձնաժողովի անդամների հավասար մասնակցությունը որոշումների կայացման գործընթացին, իսկ մյուս կողմից՝ կկանխի այնպիսի իրավիճակների առաջացումը, երբ լիցենզավորված անձի իրավունքների նկատմամբ ինտենսիվ միջամտություն առաջացնող որոշումների ընդունումը կարող է կախված լինել միայն մեկ անձի հայեցողությունից:

Վերոնշյալ դիրքորոշումների համատեքստում անդրադառնալով վիճարկվող դրույթներից «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 9-րդ մասի սահմանադրականությանը՝ հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

Նշված օրենքի 36-րդ հոդվածի 9-րդ մասի 1-ին նախադասության համաձայն՝ կառավարության լիազոր մարմնի հաղորդման առկայության դեպքում, որով

9


առերևույթ հիմնավորվում է, որ վտանգվել է կամ կարող է վտանգվել էներգետիկայի բնագավառի բաղկացուցիչ համակարգի անվտանգությունը կամ հուսալիությունը, կամ հավանական խախտումը հանգեցրել է կամ կարող է հանգեցնել մի խումբ սպառողների իրավունքների կամ օրինական շահերի խախտման կամ լիցենզիայի պայմանների կոպիտ խախտման, **հանձնաժողովի նախագահի նախաձեռնությամբ անհապաղ, բայց ոչ ուշ, քան հաղորդումը ստանալուց հետո՝ հինգօրյա ժամկետում, հարուցվում է վարչական վարույթ:**

Վերոնշյալ դրույթի բովանդակությունից հետևում է, որ Հանձնաժողովի նախագահին չի վերապահվում հայեցողական լիազորություն՝ ինքնուրույն որոշելու վարչական վարույթ հարուցելու նպատակահարմարությունը կամ անհրաժեշտությունը: Իրավակարգավորման տրամաբանությունից հետևում է, որ վարչական վարույթի հարուցումը պայմանավորված է կոնկրետ իրավաբանական փաստի, այն է՝ կառավարության լիազոր մարմնի հաղորդման առկայությամբ: Այլ կերպ ասած՝ հաղորդման ներկայացումը օրենքով նախատեսված այն նախապայմանն է, որի առկայության դեպքում վարույթի հարուցումը դառնում է պարտադիր պահանջ: Ուստի գտնում են, որ Հանձնաժողովի նախագահի կողմից վարչական վարույթի հարուցումը տվյալ դեպքում կրում է ոչ թե հայեցողական, այլ պարտադիր բնույթ: Հանձնաժողովի նախագահը հանդես է գալիս ոչ թե որպես ինքնուրույն որոշում կայացնող սուբյեկտ, այլ որպես օրենքով նախատեսված ընթացակարգի իրականացումն ապահովող պաշտոնատար անձ, որի գործողությունը պայմանավորված է օրենքով սահմանված կոնկրետ իրավաբանական փաստի առկայությամբ: Բացի այդ, հարկ են համարում ընդգծել, որ տվյալ դրույթը սահմանում է նաև հստակ ժամկետ վարչական վարույթ հարուցելու որոշման կայացման համար, այն է՝ հաղորդումը ստանալուց հետո անհապաղ, սակայն ոչ ուշ, քան հինգօրյա ժամկետում: Գտնում են, որ նման ժամկետային սահմանափակումը ևս վկայում է այն մասին, որ օրենսդիրը նախագահի առջև դրել է ոչ թե գնահատողական կամ ընտրության



հնարավորություն պարունակող լիազորություն, այլ իրավական պարտականություն՝ ապահովելու օրենքով նախատեսված ընթացակարգի գործարկումը:

Շեռնաբար՝ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 9-րդ մասի՝ կառավարության լիազոր մարմնի հաղորդման առկայության դեպքում Հանձնաժողովի նախագահի կողմից կայացված միանձնյա որոշմամբ վարչական վարույթ հարուցվելու կարգավորման՝ Սահմանադրությանը համապատասխանելու մասով կիսում եմ Սահմանադրական դատարանի եզրափակիչ եզրահանգումը, բայց վերը նշված իմ պատճառաբանությունների հիմքով:

Մինչդեռ, իմ գնահատմամբ, այլ է իրավիճակը «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 9-րդ մասի մյուս կարգավորման և «Էներգետիկայի մասին» օրենքի 52.1-ին հոդվածի 1-ին և 2-րդ մասերի պարագայում:

Մասնավորապես՝ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 9-րդ մասի 2-րդ նախադասությամբ սահմանվում է, որ վարչական վարույթ հարուցելու մասին որոշմամբ կարող են կիրառվել «Էներգետիկայի մասին» օրենքի 52.1-ին հոդվածով սահմանված կանխարգելիչ միջոցառումները:

Իսկ «Էներգետիկայի մասին» օրենքի 52.1-ին հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ նույն օրենքի 42-րդ հոդվածի 3-րդ⁹, 5-րդ¹⁰ կամ 6-րդ¹¹ մասերով սահմանված

⁹ «Էներգետիկայի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզիա ունեցող անձի կողմից, բացառությամբ սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված անձանց, սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված արարքը կատարելը, որի հետևանքով վտանգվել է կամ կարող էր վտանգվել համակարգի անվտանգությունը կամ հուսալիությունը, կամ այն ուղղակիորեն հանգեցրել է մի խումբ սպառողների իրավունքների կամ օրինական շահերի խախտման կամ լիցենզիայի պայմանների կոպիտ խախտման կամ էներգետիկայի բնագավառում այլ լիցենզավորված անձի օրինական շահերի խախտման կամ լիցենզավորված գործունեության խոչընդոտմանը կամ լիցենզիայի պայմանների չկատարմանը կամ



արարքը կատարելու հիմքով վարույթ հարուցելու մասին որոշմամբ **հանձնաժողովի նախագահը կարող է կիրառել կանխարգելիչ միջոցառումներ**: Կանխարգելիչ միջոցառումների կիրառման դեպքում, ի թիվս այլնի, հաշվի են առնվում նաև լիցենզավորված անձի կողմից նախկինում կատարված խախտումների քանակը, հաճախականությունը կամ բնույթը:

Նույն հոդվածի 2-րդ մասը մասնավորեցնում է, որ նույն հոդվածով սահմանված կարգով հանձնաժողովի նախագահը իրավասու է կիրառելու հետևյալ կանխարգելիչ միջոցառումներից մեկը կամ մի քանիսը միասին.

1) սահմանել առերևույթ խախտումների կամ դրանց հետևանքների վերացման ծրագիր և լիցենզավորված անձից պահանջել իրականացնել դրանով սահմանված միջոցները.

ոչ պատշաճ կատարմանը, կամ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելն առաջացնում է տուգանք՝ քսան միլիոն դրամից քառասուն միլիոն դրամի չափով, կամ լիցենզիայի գործողության կասեցում կամ լիցենզիայի գործողության դադարեցում»:

¹⁰ «Էներգետիկայի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզիա ունեցող անձի կողմից, բացառությամբ սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված անձանց, սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելն առաջացնում է տուգանք՝ հինգ միլիոն դրամից տասը միլիոն դրամի չափով, կամ լիցենզիայի գործողության կասեցում կամ լիցենզիայի գործողության դադարեցում»:

¹¹ «Էներգետիկայի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ Էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզիա ունեցող անձի կողմից, բացառությամբ սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված անձանց, սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված արարքը կատարելը, որի հետևանքով վտանգվել է կամ կարող էր վտանգվել համակարգի անվտանգությունը կամ հուսալիությունը, կամ այն ուղղակիորեն հանգեցրել է մի խումբ սպառողների իրավունքների կամ օրինական շահերի խախտման կամ լիցենզիայի պայմանների կոպիտ խախտման կամ էներգետիկայի բնագավառում այլ լիցենզավորված անձի օրինական շահերի խախտման կամ լիցենզավորված գործունեության խոչընդոտմանը կամ լիցենզիայի պայմանների չկատարմանը կամ ոչ պատշաճ կատարմանը կամ խոչընդոտել է կարգավորող մարմնի՝ կարգավորման գործառույթների պատշաճ իրականացմանն առաջացնում է տուգանք՝ տասը միլիոն դրամից քսան միլիոն դրամի չափով, կամ լիցենզիայի գործողության կասեցում կամ լիցենզիայի գործողության դադարեցում:



2) հրավիրել լիցենզավորված անձի կառավարման մարմինների նիստեր (ժողովներ)՝ հանձնաժողովի նախագահի սահմանած օրակարգով.

3) պահանջել հանձնաժողովի նախագահի սահմանած ժամկետում կատարել լիցենզավորված անձի կանոնադրության փոփոխություն և դիմել պետական ռեգիստր կանոնադրության փոփոխությունների պետական գրանցումն ապահովելու նպատակով.

4) պահանջել հանձնաժողովի նախագահի սահմանած ժամկետում կատարել լիցենզավորված անձի կառավարման մարմինների անդամի կամ անդամների փոփոխություն.

5) նշանակել լիցենզավորված անձի ժամանակավոր կառավարիչ:

Սահմանադրական դատարանն իր՝ 2026 թվականի մարտի 12-ի ՍԴՈ-1819 որոշմամբ Հանձնաժողովի նախագահին վերապահված՝ կանխարգելիչ միջոցառումներ կիրառելու լիազորության՝ Սահմանադրությանը համապատասխանելու եզրահանգմանը հիմնականում եկել է հետևյալ պատճառաբանությունների հիման վրա.

- «133. «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 3, 5 կամ 6-րդ մասերով սահմանված արարքը կատարելու հիմքով վարչական վարույթ հարուցելու և Օրենքի 52.1-ին հոդվածի 2-րդ մասով սահմանված կանխարգելիչ միջոցառումները կիրառելու իրավասությունը Հանձնաժողովի նախագահին վերապահելու օրենսդրական ընդհանուր հիմքը «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետն է, համաձայն որի՝ Հանձնաժողովի նախագահն իրավասու է «իրականացնել օրենքով իրեն վերապահված այլ լիազորություններ»»,

- «135. Սահմանադրական դատարանը փաստում է, որ թեև քննարկվող դեպքում վարչական վարույթ հարուցող և կանխարգելիչ միջոցառումներ կիրառող իրավասու սուբյեկտը Հանձնաժողովի նախագահն է, այդուհանդերձ, վերջինիս



կողմից՝ վարչական վարույթ հարուցելու որոշման հիմքում ընկած առերևույթ իրավախախտման վերաբերյալ հիմնավորումների ու փաստերի առնչությամբ իրականացվող վարույթի ընթացիկ և եզրափակիչ փուլերն ամբողջությամբ գտնվում են Հանձնաժողովի կոլեգիալ կազմի իրավասության տիրույթում: Այլ կերպ՝ Հանձնաժողովի նախագահի կողմից հարուցված վարչական վարույթի «ճակատագիրը» որոշվում է բացառապես Հանձնաժողովի կոլեգիալ կազմով, ինչը ենթադրում է նաև Հանձնաժողովի նախագահի կողմից հարուցված վարչական վարույթը՝ համապատասխան օրենսդրական հիմքերի առկայության պարագայում, Հանձնաժողովի կողմից կարճելու տարբերակը»:

Ելնելով վերոնշյալ վիճարկվող դրույթների բովանդակությունից՝ գտնում են, որ Հանձնաժողովի նախագահի կողմից լիցենզավորված անձի նկատմամբ կանխարգելիչ միջոցառումներ կիրառելու վերաբերյալ օրենսդրական կարգավորումներն էապես տարբերվում են վարչական վարույթ հարուցելու մասին որոշման ընդունման կարգավորումից: Մասնավորապես՝ ինչպես արդեն վերը նշվեց վարչական վարույթ հարուցելու դեպքում Հանձնաժողովի նախագահի գործողությունը նպայմանավորված է օրենքով նախատեսված իրավաբանական փաստի՝ կառավարության լիազոր մարմնի հաղորդման առկայությամբ, և այդ պայմաններում Հանձնաժողովի նախագահը գործում է օրենքով նախատեսված պարտադիր ընթացակարգի շրջանակներում: Մինչդեռ կանխարգելիչ միջոցառումների կիրառման հարցում օրենսդիրը Հանձնաժողովի նախագահին վերապահել է միանձնյա կարգով որոշում կայացնելու լիազորություն. ըստ այդմ, վերջինս իրավասու է որոշելու՝ կոնկրետ իրավիճակում արդյո՞ք անհրաժեշտ է կիրառել կանխարգելիչ միջոցառում, թե՛ ոչ, և եթե այո, ապա օրենքով նախատեսված միջոցառումներից ո՞րը կամ որո՞նք ընտրել:

Փաստորեն, օրենսդիրը լիցենզավորված անձի նկատմամբ կանխարգելիչ միջոցառումների կիրառման հարցում Հանձնաժողովի նախագահին վերապահել է

14


հայեցողական լիազորություն: Մասնավորապես՝ այդ մասին է վկայում այն հանգամանքը, որ վիճարկվող դրույթներով Հանձնաժողովի նախագահին տրվել է լիազորություն՝ կիրառելու մեկ կամ մի քանի կանխարգելիչ միջոցառում՝ հաշվի առնելով նաև լիցենզավորված անձի կողմից նախկինում կատարված խախտումների քանակը, հաճախականությունը կամ բնույթը: Նշվածից հետևում է, որ Հանձնաժողովի նախագահի կողմից լիցենզավորված անձի նկատմամբ կանխարգելիչ միջոցառումների կիրառման վերաբերյալ լիազորությունը ենթադրում է սովյալ անձի կողմից հայեցողական և գնահատողական վարքագծի դրսևորում:

Իսկ հայեցողական լիազորությունը պետական մարմնին կամ պաշտոնատար անձին օրենքով վերապահված այնպիսի լիազորությունն է, որի շրջանակում վերջինս, ելնելով կոնկրետ գործի հանգամանքներից և հանրային շահի ապահովման անհրաժեշտությունից, իրավասու է ընտրել օրենքով թույլատրելի մի քանի հնարավոր իրավաչափ լուծումներից որևէ մեկը: Բայցևայնպես, հայեցողական լիազորությունը չի կարող մեկնաբանվել որպես անսահմանափակ լիազորություն. այն ենթակա է նաև սահմանափակումների և պետք է իրականացվի համաչափության և կամայականության արգելքի սկզբունքների պահպանմամբ:

Վերոնշյալի համատեքստում կարևոր են համարում քննարկման առարկա դարձնել լիցենզավորված անձի նկատմամբ կիրառվող կանխարգելիչ միջոցառումների բովանդակությունը: Այսպես՝ «Էներգետիկայի մասին» օրենքի 52.1-ին հոդվածի 2-րդ մասով նախատեսված կարգավորումից հետևում է, որ կանխարգելիչ միջոցառումներն իրենց բնույթով այնպիսին են, որ լիցենզավորված անձի իրավունքների նկատմամբ առաջացնում են ինտենսիվ միջամտություն: Մասնավորապես, ի թիվս այլնի, դրանք կարող են դրսևորվել լիցենզավորված անձի կառավարման մարմինների գործունեության վրա ազդեցության, կանոնադրական փոփոխությունների, կառավարման մարմինների անդամների փոփոխության կամ ժամանակավոր կառավարչի նշանակման տեսքով: Հետևաբար նման միջոցառումներն իրենց բնույթով հանդիսանում են սահմանափակող և միջամտող



իրավական միջոցներ, որոնք էական և ինտենսիվ միջամտություն են լիցենզավորված անձի իրավունքների և օրինական շահերի վրա:

Ելնելով վերոնշյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հանձնաժողովի գործունեության հիմքում սահմանադրի կողմից դրվել է կոլեգիալության սկզբունքը (հակառակ դեպքում սահմանադիրը չէր կարևորի Հանձնաժողովի՝ մի քանի անդամներից բաղկացած լինելու հանգամանքը և այդ անդամներին Ազգային ժողովի պատգամավորների կողմից նշանակելու հանգամանքը), գտնում եմ, որ այնպիսի որոշումների կայացումը, որոնք լիցենզավորված անձանց իրավունքների նկատմամբ կարող են առաջացնել ինտենսիվ միջամտություն, ինչպիսիք են օրինակ՝ վերջիններիս նկատմամբ կանխարգելիչ միջոցառումների կիրառումը, պետք է ընդունվեն կոլեգիալ քննարկման և քվեարկության արդյունքում:

Միաժամանակ, Հանձնաժողովի նախագահի կողմից լիցենզավորված անձի նկատմամբ կանխարգելիչ միջոցառումների միանձնյա կիրառման վերաբերյալ օրենսդրական դրույթի՝ Սահմանադրությանը համապատասխանելու վերաբերյալ Սահմանադրական դատարանի այն պատճառաբանությունը, համաձայն որի՝ «(...) իրականացվող վարույթի ընթացիկ և եզրափակիչ փուլերն ամբողջությամբ գտնվում են Հանձնաժողովի կոլեգիալ կազմի տիրույթում», իմ կարծիքով՝ չի կարող բավարար փաստարկ հանդիսանալ նշված կարգավորումը Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու համար հետևյալ պատճառաբանությամբ.

թեև վարույթի հետագա փուլերում որոշումների կայացումը կարող է իրականացվել կոլեգիալ կարգով, այնուամենայնիվ մինչև այդ փուլերի վրա հասնելը Հանձնաժողովի նախագահի կողմից միանձնյա կարգով կանխարգելիչ միջոցառումների կիրառումն ինքնին արդեն առաջացնում է լիցենզավորված անձի իրավունքների և գործունեության նկատմամբ միջամտող ու սահմանափակող իրավական հետևանքներ: Հետևաբար այն հանգամանքը, որ վարույթի հետագա փուլերը կարող են իրականացվել կոլեգիալ կարգով, չի վերացնում այն փաստը, որ լիցենզավորված անձի իրավունքների վրա անմիջական ազդեցություն ունեցող

16


կանխարգելիչ միջոցառումները կիրառվում են միանձնյա կարգով կայացված որոշմամբ:

Բացի այդ, գտնում եմ, որ Հանձնաժողովի նախագահի կողմից միանձնյա կարգով և բացառապես վերջինիս հայեցողությամբ կանխարգելիչ միջոցառումների կիրառումը կարող է առաջացնել մի շարք ռիսկեր: Նախ՝ նման կարգավորումը կարող է հանգեցնել այնպիսի իրավիճակի, երբ լիցենզավորված անձանց նկատմամբ սահմանափակող և միջամտող հետևանքներ առաջացնող միջոցառումները կիրառվեն մեկ պաշտոնատար անձի սուբյեկտիվ գնահատականի հիման վրա: Բացի այդ, նման կարգավորումը կարող է առաջացնել նաև տրամագծորեն հակառակ բնույթի ռիսկեր: Մասնավորապես՝ այն դեպքերում, երբ հանրային շահով պայմանավորված անհրաժեշտություն կլինի անհապաղ կիրառելու կանխարգելիչ միջոցառումներ, դրանց կիրառումը կարող է կախված լինել միայն Հանձնաժողովի նախագահի կամքից կամ նախաձեռնությունից: Բացի այդ, հատկանշական է նաև այն հանգամանքը, որ թեև Հանձնաժողովն Ազգային ժողովի կողմից նշանակված մի քանի անդամներից բաղկացած կոլեգիալ մարմին է, այդուհանդերձ, այդ կոլեգիալ մարմնի մյուս անդամները, օրենսդրական նման կարգավորման արդյունքում, լիցենզավորված անձի նկատմամբ կանխարգելիչ միջոցառումներ կիրառելու կամ չկիրառելու վերաբերյալ հարցի լուծմանը մասնակցություն ունենալու որևէ օրենսդրական հնարավորություն չունեն:

Վերոնշյալից բացի, հարկ եմ համարում քննարկման առարկա դարձնել նաև Հանձնաժողովի նախագահի գործառույթները Սահմանադրական դատարանի այն պատճառաբանության համատեքստում, ըստ որի՝ «(...) կանխարգելիչ միջոցառումները կիրառելու իրավասությունը Հանձնաժողովի նախագահին վերապահելու օրենսդրական ընդհանուր հիմքը «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետն է, համաձայն որի՝ Հանձնաժողովի նախագահն իրավասու է «իրականացնել օրենքով իրեն վերապահված այլ լիազորություններ»»:

Այսպես՝ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 8-րդ հոդվածով սահմանվում են Հանձնաժողովի նախագահի գործառույթները: Մասնավորապես՝ նշված հոդվածի համաձայն՝ Հանձնաժողովի նախագահը համակարգում և ապահովում է Հանձնաժողովի բնականոն աշխատանքը, հրավիրում և նախագահում է հանձնաժողովի նիստերը, ստորագրում է հանձնաժողովի որոշումները և պաշտոնական այլ փաստաթղթեր, ընդունում է հրամաններ, տալիս է հանձնաժողովի անունից հանդես գալու լիազորագրեր, կնքում է պայմանագրեր, կազմակերպում է հանձնաժողովի ընդունած որոշումների կատարումը, հաստատում է հանձնաժողովի հաստիքացուցակը, հանձնաժողովի անդամների և իր կողմից նշանակվող աշխատողների համար հանդես է գալիս որպես գործատուի ներկայացուցիչ, ինչպես նաև ներկայացնում է հանձնաժողովը Հայաստանի Հանրապետությունում, այլ պետություններում և միջազգային կազմակերպություններում:

Նշված գործառույթների համակարգային վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը Հանձնաժողովի նախագահին վերապահել է հիմնականում կազմակերպահրավական և վարչակազմակերպչական բնույթի գործառույթներ, որոնք ուղղված են հանձնաժողովի գործունեության կազմակերպմանը և դրա բնականոն աշխատանքի ապահովմանը:

Միաժամանակ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 8-րդ հոդված 1-ին մասի 7-րդ կետով նախատեսվում է, որ Հանձնաժողովի նախագահն իրականացնում է նաև օրենքով իրեն վերապահված այլ լիազորություններ: Ելնելով վերոնշյալ գործառույթների համակարգային վերլուծությունից՝ գտնում են, որ նշված դրույթը պետք է մեկնաբանվի նույն հոդվածում թվարկված գործառույթների ընդհանուր բնույթի և նպատակների համատեքստում: Հետևաբար նշված դրույթի ներքո պետք է հասկանալ այնպիսի լրացուցիչ լիազորություններ, որոնք իրենց բովանդակությամբ համահունչ են Հանձնաժողովի նախագահի հիմնական գործառույթների բնույթին և ուղղված են

18


հանձնաժողովի գործունեության կազմակերպմանը և բնականոն աշխատանքի ապահովմանը: Մինչդեռ Սահմանադրական դատարանի կողմից նշված դրույթը մեկնաբանվել է նույն հոդվածի մյուս դրույթների համատեքստից դուրս՝ անտեսելով նույն հոդվածում թվարկված մյուս լիազորությունների բնույթը, որի արդյունքում ստացվում է մի իրավիճակ, որ Սահմանադրության 122-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով կոլեգիալ մարմնի անդամներ նշանակված անդամներից մեկը (Հանձնաժողովի նախագահը) օժտված է մյուս անդամների հանդեպ «արտոնյալ» կարգավիճակով և կարող է քննարկել հարց ու լիցենզավորված անձի իրավունքների նկատմամբ ինտենսիվ միջամտություն պարունակող կանխարգելիչ միջոցառումներ կիրառել՝ առանց որևէ կերպ հաշվի առնելու նշված կոլեգիալ մարմնի որևէ այլ անդամի կարծիքը կամ դիրքորոշումը, որպիսի վարքագիծն էլ չի կարող համահունչ լինել Սահմանադրության 122-րդ հոդվածում սահմանադրի կողմից արտահայտած կամքին:

Ելնելով վերոնշյալից՝ գտնում եմ, որ «այլ լիազորություններ» ձևակերպման ներքո չեն կարող ներառվել այնպիսի լիազորություններ, որոնց գործադրումը կարող են առաջացնել միջամտող կամ սահմանափակող իրավական հետևանքներ լիցենզավորված անձանց համար: Ուստի գտնում եմ, որ Հանձնաժողովի նախագահի կողմից լիցենզավորված անձի նկատմամբ միանձնյա կարգով կանխարգելիչ միջոցառումներ կիրառելու լիազորությունը չի կարող դիտարկվել որպես Հանձնաժողովի նախագահի կազմակերպարավական կամ վարչակազմակերպչական գործառույթների շարունակություն և չի կարող ներառվել «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով նախատեսված «այլ լիազորությունների» շրջանակում:

1.2. Ամփոփելով վերոնշյալը՝ գտնում եմ, որ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 9-րդ մասը և «Էներգետիկայի մասին» օրենքի 52.1-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը՝

19


այնքանով, որքանով Հանձնաժողովի նախագահին վերապահում են իրավասություն միանձնյա կարգով լիցենզավորված անձի նկատմամբ կիրառելու կանխարգելիչ միջոցառումներ, հակասում են Սահմանադրության 122-րդ հոդվածին:

ԲԱԺԻՆ II

2.1. «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 9-րդ մասի և «Էներգետիկայի մասին» օրենքի 52.1-րդ հոդվածի 3-րդ մասի վերաբերյալ.

Նկատի ունենալով, որ սույն դիմումի վերացական վերահսկողության դաշտում Սահմանադրական դատարանն արժևորել է և իր՝ 2026 թվականի մարտի 12-ի ՍԴՈ-1819 որոշմամբ անդրադարձ է կատարել Հանձնաժողովի իրավական ակտերի դատական բողոքարկման իրավական հնարավորության հարցին, հարկ եմ համարում «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 9-րդ մասի և «Էներգետիկայի մասին» օրենքի 52.1-րդ հոդվածի 3-րդ մասի սահմանադրականությունը քննարկման առարկա դարձնել նաև այդ տեսանկյունից:

Այսպես, Սահմանադրականը դատարանը, վերոնշյալ որոշմամբ անդրադառնալով Հանձնաժողովի իրավական ակտերի դատական բողոքարկման իրավական հնարավորության հարցին, ընդամենը մատնանշելով Վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասը և «Էներգետիկայի մասին» օրենքի 52.1-ին հոդվածի 3-րդ մասը, զուտ արձանագրել է հետևյալը.



«114. (...) հաշվի առնելով Հանձնաժողովի բացառիկ իրավասությունը՝ էներգետիկայի բնագավառում իրականացնելու լիցենզավորում (տրամադրելու լիցենզիաներ, երկարաձգելու դրանց գործողության ժամկետները, վերաձևակերպելու, կասեցնելու և դադարեցնելու դրանց գործողությունը, ինչպես նաև սահմանելու լիցենզիաների պայմանները, վերահսկելու դրանց կատարումը) և կիրառելու [«էներգետիկայի մասին» օրենքով] սահմանված պատասխանատվության միջոցները, ինչը ենթադրում է համապատասխան վարության ռոտումների կայացում, այդ թվում նաև՝ կանխարգելիչ միջոցառումների կիրառում՝ **օրենսդիրը Սահմանադրությամբ երաշխավորված արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի ապահովման համատեքստում նախատեսել է Հանձնաժողովի ու դրա նախագահի իրավական ակտերի՝ դատական կարգով բողոքարկման իրավական հնարավորություն»:**

Անդրադառնալով Հանձնաժողովի իրավական ակտերի դատական բողոքարկման իրավական հնարավորության հարցին՝ հարկ եմ համարում նշել հետևյալը.

Նախ, անկախ ինքնավար մարմինների սահմանադրաիրավական կարգավիճակի առանձնահատկություններից՝ ի ապահովումն իշխանությունների բաժանման և հավասարակշռման սահմանադրական սկզբունքի, վերջիններիս ռոտումները ենթակա են վերանայման դատարանի կողմից: Ինքնավար մարմինների անկախությունը ենթադրում է դրանց ինքնուրույնություն և ինքնավարություն հանրային իշխանության այլ մարմիններից, սակայն չի կարող բացառել վերջիններիս գործունեության նկատմամբ դատական վերահսկողության իրականացումը: Այսպես.

Սահմանադրության՝ «Դատական պաշտպանության իրավունքը և մարդու իրավունքների պաշտպանության միջազգային մարմիններ դիմելու իրավունքը» վերտառությամբ 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր

իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

Սահմանադրական դատարանը բազմիցս անդրադարձել է արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտմանը՝ այդ առնչությամբ, մասնավորապես, արտահայտելով ներքոնշյալ իրավական դիրքորոշումները.

- «Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառման գործունեություն իրականացնելիս: Դա ենթադրում է, մի դեպքում, օրենսդրի պարտականությունը՝ լիարժեք դատական պաշտպանության հնարավորություն և մեխանիզմներ ամրագրել օրենքներում, մյուս կողմից, իրավակիրառողի պարտականությունը՝ առանց բացառությունների քննարկման ընդունել անձանց՝ օրինական կարգով իրենց ուղղված դիմումները, որոնցով նրանք հայցում են իրավական պաշտպանություն իրենց իրավունքների ենթադրյալ խախտումներից» (2007 թվականի նոյեմբերի 28-ի ՍԴՈ-719 որոշում):

- «(...) դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստազրկել << Սահմանադրության 18-րդ հոդվածով երաշխավորված իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ» (2015 թվականի դեկտեմբերի 22-ի ՍԴՈ-1249 որոշում):

- «Դատարան դիմելու՝ անձի իրավունքի իրացման երաշխավորումն իրավական առաջնահերթ նախապայման է անձի սահմանադրական իրավունքներն ու ազատությունները դատական կարգով պաշտպանելու համար» (2016 թվականի մարտի 10-ի ՍԴՈ-1257 որոշում):

Այսպիսով՝ մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների պաշտպանության առանցքային մեխանիզմը դատական պաշտպանության ինստիտուտն է: Վերջինս այն իրավական գործիքակազմն է, որը հնարավորություն է



տալիս որոշակի դատավարական ընթացակարգի միջոցով գործնականում ապահովել իրավակիրառ մարմնի սխալների բացահայտումը՝ դրանով իսկ նպաստելով մարդու իրավունքների հնարավոր խախտումների հայտնաբերմանն ու դրանց վերացմանը:

Օրենսդիրը, ելնելով դատական պաշտպանության մեխանիզմներ ամրագրելու պարտականությունից, Հանձնաժողովի իրավական ակտերի դատական բողոքարկման մասով նախատեսել է հետևյալ կարգավորումները.

Այսպես՝ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ Հանձնաժողովի իրավական ակտերը կարող են **բողոքարկվել դատական կարգով:**

Հատկանշական է, որ Սահմանադրական դատարանը դեռևս 2007 թվականի հունվարի 16-ի ՍԴՈ-673 որոշման շրջանակներում նշել է, որ «(...) Հանձնաժողովի որոշման բողոքարկման հարց քննելիս՝ դատական վերահսկողության խնդիրը ոչ թե այդ մարմնի՝ օրենքով սահմանված բացառիկ գործառույթների կրկնօրինակումն է, մասնավորապես՝ հանրային ծառայությունների սակագների դրույքաչափ սահմանելու, փոփոխելու միջոցով, կամ անկախ գործելու իրավասությամբ օժտված մարմնի գործունեությանը շարունակական և գործառնական վերահսկողությամբ միջամտելը, այլ՝ հիմնվելով հանրային ծառայությունների բնագավառում Հանձնաժողովի սակագնային և լիցենզավորման (գործունեության թույլտվություն տրամադրող) գործունեության, ինչպես նաև սպառողների իրավունքների պաշտպանության սահմանադրաիրավական և օրենսդրական չափանիշների վրա, այդ մարմնի որոշումների՝ այդ թվում նաև սակագների սահմանման վերաբերյալ, օրինականությունը վերահսկելը»:

Այսպիսով, հաշվի առնելով Հանձնաժողովի բացառիկ իրավասությունն էներգետիկայի բնագավառում իրականացնելու լիցենզավորում, մասնավորապես՝ տրամադրելու լիցենզիաներ, երկարաձգելու դրանց գործողության ժամկետները, վերաձևակերպելու, կասեցնելու և դադարեցնելու դրանց գործողությունը, ինչպես



նաև սահմանելու լիցենզիաների պայմանները, վերահսկելու դրանց կատարումը և կիրառելու «Էներգետիկայի մասին» օրենքով սահմանված պատասխանատվության միջոցները, ինչը ենթադրում է համապատասխան վարույթային որոշումների կայացում, այդ թվում նաև՝ կանխարգելիչ միջոցառումների կիրառում՝ օրենսդիրը Սահմանադրությամբ երաշխավորված արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի ապահովման համատեքստում նախատեսել է Հանձնաժողովի իրավական ակտերի դատական կարգով բողոքարկման իրավական հնարավորություն:

Վերոնշյալի համատեքստում նկատի ունենալով, որ սույն գործի հարուցման հիմք հանդիսացող դիմումով վիճարկման առարկա են հանդիսանում «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի և «Էներգետիկայի մասին» օրենքի փոփոխությունների արդյունքում ընդունված կարգավորումները (համապատասխանաբար՝ 2025 թվականի հուլիսի 3-ի թիվ ՀՕ-195-Ն օրենք և 2025 թվականի հուլիսի 3-ի թիվ ՀՕ-196-Ն օրենք), ապա Հանձնաժողովի իրավական ակտերի դատական կարգով բողոքարկման իրավական հնարավորության հարցը հարկ եմ համարում քննարկման առարկա դարձնել լիցենզավորված անձի՝ Հանձնաժողովի նախագահի կողմից վարույթ հարուցելու և կանխարգելիչ միջոցառումների կիրառման վերաբերյալ որոշումների դատական բողոքարկման իրավունքի իրացման համատեքստում:

Այսպես՝ «Էներգետիկայի մասին» օրենքի 52.1-րդ հոդվածի 1-ին մասով և 2-րդ մասի 5-րդ կետով սահմանվում է, որ վարույթ հարուցելու մասին որոշմամբ Հանձնաժողովի նախագահը կարող է կիրառել կանխարգելիչ միջոցառումներ, որոնցից է, ի թիվս այլնի, լիցենզավորված անձի ժամանակավոր կառավարիչ նշանակելը: Իսկ նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ լիցենզավորված անձի ժամանակավոր կառավարչի նշանակմամբ և նրա գործունեության ամբողջ ընթացքում նրան են անցնում լիցենզավորված անձի գործադիր մարմնի բոլոր լիազորությունները՝ բացառելով ժամանակավոր կառավարիչ նշանակելու մասին



որոշմամբ սահմանված ժամանակահատվածում լիցենզավորված անձի գործադիր մարմնի լիցենզավորված անձի գործադիր կառավարումն իրականացնելը: Լիցենզավորված անձի ժամանակավոր կառավարչի գործունեության ժամանակահատվածում լիցենզավորված անձի կառավարման այլ մարմիններն իրենց իրավասությունները (լիազորությունները) իրականացնում են ժամանակավոր կառավարչի համաձայնությամբ:

Այսպիսով, վերոնշյալ օրենսդրական կարգավորումներից հետևում է, որ Հանձնաժողովի նախագահի կողմից կանխարգելիչ միջոցառման կիրառման արդյունքում լիցենզավորված անձի գործադիր կառավարման իրականացումը փոխանցվում է ժամանակավոր կառավարչին, իսկ լիցենզավորված անձի գործադիր մարմինը փաստացի ժամանակավորապես զրկվում է իր կառավարման լիազորություններն իրականացնելու հնարավորությունից: Գտնում են, որ նման կարգավորումը պայմանավորված է էներգետիկայի ոլորտի առանձնահատկություններով և նպատակ ունի կանխելու այնպիսի իրավիճակների առաջացումը, որոնք կարող են վտանգել ոլորտի կայուն և անվտանգ գործունեությունը: Այս տեսանկյունից օրենսդիրը նպատակ է հետապնդել ստեղծելու այնպիսի գործիքակազմ, որը հնարավորություն կտա Հանձնաժողովին անհրաժեշտության դեպքում ապահովելու լիցենզավորված անձի գործունեության արդյունավետ կառավարումը:

Այդուհանդերձ, նման կարգավորումը մի կողմից՝ ապահովում է արդյունավետ կառավարումը հանրային կարևորություն ունեցող ոլորտում, իսկ մյուս կողմից՝ կարող է սահմանափակել լիցենզավորված անձի կողմից իր իրավունքների արդյունավետ պաշտպանության հնարավորությունները, այդ թվում՝ դատական պաշտպանության իրավունքի, մասնավորապես այն դեպքերում, երբ ժամանակավոր կառավարչի և լիցենզավորված անձի կառավարման մարմինների իրավական դիրքորոշումները չհամընկնեն:



25

Անդրադառնալով Հանձնաժողովի նախագահի վարույթ հարուցելու և կանխարգելիչ միջոցառումների կիրառման վերաբերյալ որոշումների դատական բողոքարկման հնարավորությանը՝ հարկ է նշել, որ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 9-րդ մասը նախատեսել է, որ Կառավարության լիազոր մարմնի հաղորդման հիման վրա Հանձնաժողովի նախագահի կողմից կայացված վերոնշյալ որոշումներն ուժի մեջ մտնելու օրվանից ենթակա են անհապաղ կատարման, և դրանց բողոքարկումը չի կասեցնում դրանց գործողությունը կամ կատարումը:

Այսպիսով, նշված կարգավորումից հետևում է, որ Հանձնաժողովի նախագահի կողմից վարույթ հարուցելու և կանխարգելիչ միջոցառումների կիրառման վերաբերյալ որոշումները ևս ենթակա են դատական կարգով բողոքարկման: Մինչդեռ, ինչպես վերը նշվեց, ժամանակավոր կառավարչի նշանակմամբ լիցենզավորված անձի գործադիր մարմինը ժամանակավորապես զրկվում է իր լիազորություններն իրականացնելու հնարավորությունից, այդ թվում՝ դատական պաշտպանության միջոցների կիրառման վերաբերյալ որոշումներ կայացնելու լիազորությունից: Ստացվում է, որ Հանձնաժողովի նախագահի կողմից ընդունված՝ վարույթ հարուցելու և կանխարգելիչ միջոցառումների կիրառման վերաբերյալ որոշումների բողոքարկման իրավասությունը ևս վերապահվում է հենց ժամանակավոր կառավարչին: Հատկանշական է, որ Հանձնաժողովի նախագահի կողմից վարույթ հարուցելու մասին որոշման կայացմամբ կարող են ընդունվել նաև կանխարգելիչ միջոցառումների կիրառման վերաբերյալ որոշումներ, որոնց շարքին է դասվում նաև ժամանակավոր կառավարիչ նշանակելու մասին որոշումը: Մինչդեռ ակնհայտ է, որ ժամանակավոր կառավարիչը, որպես հենց այդ որոշման հիման վրա նշանակված անձ, օբյեկտիվորեն չի կարող շահագրգռված լինել վիճարկելու վարույթ հարուցելու և դրա արդյունքում իրեն ժամանակավոր կառավարիչ նշանակելու վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից կայացված որոշումները: Ուստի գտնում եմ, որ նման իրավակարգավորման պայմաններում «Հանրային

ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքով նախատեսված դատական բողոքարկման իրավունքը ձեռք է բերում ձևական բնույթ, քանի որ սվյալ իրավունքի իրացումը դառնում է առկախված այնպիսի սուբյեկտից, որը ողջամտորեն չի կարող դիտվել որպես այդ իրավունքի արդյունավետ իրականացնող:

Ամփոփելով վերոնշյալը՝ գտնում եմ, որ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 9-րդ մասը՝ «Էներգետիկայի մասին» օրենքի 52.1-ին հոդվածի 3-րդ մասի համակցված կիրառությամբ չի ապահովում լիցենզավորված անձի արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի ռեալ (իրական) իրացումը Հանձնաժողովի նախագահի վարույթ հարուցելու և կանխարգելիչ միջոցառումներ կիրառելու վերաբերյալ որոշումների բողոքարկման առնչությամբ:

Ավելին՝ կանխարգելիչ միջոցառման կիրառմամբ լիցենզավորված անձի ժամանակավոր կառավարիչ նշանակվելու պայմաններում լիցենզավորված անձի՝ Հանձնաժողովի իրավական ակտերի դատական բողոքարկման իրավունքի իրացման հարցի առնչությամբ առկա է նաև ձևավորված դատական պրակտիկա: Մասնավորապես՝ 2026 թվականի փետրվարի 2-ին «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից Սահմանադրական դատարան մուտքագրված (մուտք՝ ԱԴ-14) անհատական դիմումի և կից փաստաթղթերի ուսումնասիրությունից հետևում է, որ լիցենզավորված անձի գործադիր մարմնի ղեկավարի անունից ընդդեմ Հանձնաժողովի հայցադիմում է ներկայացվել Վարչական դատարան, որը վերադարձվել է այն պատճառաբանությամբ, որ լիցենզավորված անձի նկատմամբ կիրառվել է կանխարգելիչ միջոցառում և նշանակվել է ժամանակավոր կառավարիչ, ուստի վերջինիս է անցել լիցենզավորված անձի գործադիր մարմնի բոլոր լիազորությունները: Ըստ այդմ՝ Վարչական դատարանը նշել է, որ լիցենզավորված անձի գործադիր մարմնի ղեկավարի կողմից տրված լիազորագիրը չի կարող հանդիսանալ լիցենզավորված անձի գործը դատարանում վարելու համար



լիազորությունները հավաստող պատշաճ ապացույց (տե՛ս՝ թիվ ՎԴ/19878/05/25 վարչական գործը): Ավելին՝ Վարչական դատարանի՝ «Հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշումը վերաքննության և համապատասխանաբար վճռաբեկության կարգով բողոքարկման արդյունքում մնացել է անփոփոխ:


Բացի այդ, վերոնշյալ անհատական դիմումում մատնանշվել է նաև մեկ այլ դատական գործ, այն է՝ ՎԴ/13316/05/25 վարչական գործը, որի շրջանակում կայացված դատական ակտերի ուսումնասիրությունից հետևում է, որ լիցենզավորված անձը, դիմելով Վարչական դատարան, պահանջել է ճանաչել լիազոր մարմնի հաղորդման հիման վրա Հանձնաժողովի նախագահի «Վարչական վարույթ հարուցելու և կանխարգելիչ միջոցառում կիրառելու մասին» որոշման՝ վարույթ հարուցելու մասով իրավահարաբերության բացակայությունը: Մինչդեռ, Վարչական դատարանը հայցադիմումի ընդունումը մերժել է այն պատճառաբանությամբ, որ լիցենզավորված անձի նկատմամբ կիրառվել է կանխարգելիչ միջոցառում և նշանակվել է լիցենզավորված անձի ժամանակավոր կառավարիչ, ուստի վերջինիս է անցել լիցենզավորված անձի գործունեության ամբողջ ընթացքում գործադիր մարմնի բոլոր լիազորությունները՝ բացառելով ժամանակավոր կառավարիչ նշանակելու մասին որոշմամբ սահմանված ժամանակահատվածում լիցենզավորված անձի գործադիր մարմնի գործադիր կառավարումն իրականացնելը: Հետևաբար, Վարչական դատարանը փաստել է, որ լիցենզավորված անձի գործադիր մարմնի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատարի կողմից տրված լիազորագիրն այլևս չի կարող հանդիսանալ լիցենզավորված անձի գործը դատարանում վարելու համար լիազորությունները հավաստող պատշաճ ապացույց, ըստ այդմ, Վարչական դատարանը գտել է, որ հայցադիմումը ներկայացվել է դրա իրավունքն ակնհայտորեն չունեցող անձի կողմից: Միաժամանակ, Վարչական դատարանի՝ «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումը լիցենզավորված անձի գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի կողմից բողոքարկվել է վերաքննության



կարգով: Իսկ Վերաքննիչ վարչական դատարանը կայացրել է «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշում այն պատճառաբանությամբ, որ լիցենզավորված անձը Վերաքննիչ վարչական դատարան է ներկայացրել վերաքննիչ բողոքը հետ վերցնելու մասին դիմում, որը լիցենզավորված անձի անունից ստորագրել է վերջինիս ժամանակավոր կառավարիչը: Իսկ Վերաքննիչ վարչական դատարանի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշման դեմ լիցենզավորված անձի անունից ներկայացված վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը Վճռաբեկ դատարանի վարչական պալատի կողմից մերժվել է:

Այսպիսով, ձևավորված դատական պրակտիկայից ևս հետևում է, որ լիցենզավորված անձի կողմից դատական պաշտպանության իրավունքի իրացումը ենթարկվել է սահմանափակման՝ պայմանավորված ժամանակավոր կառավարչի նշանակմամբ: Մասնավորապես, ժամանակավոր կառավարչի նշանակման պայմաններում լիցենզավորված անձը, իրավաբանորեն ունենալով այդ ակտերը վիճարկելու օրենսդրական հնարավորություն, փաստացի զրկվել է դատական պաշտպանության իր իրավունքը ինքնուրույն իրացնելու հնարավորությունից: Ելնելով վերոնշյալից՝ գտնում եմ, որ քննարկվող հարցի վերաբերյալ ձևավորված դատական պրակտիկան ևս հաստատում է «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 9-րդ մասի և «Էներգետիկայի մասին» օրենքի 52.1-ին հոդվածի 3-րդ մասի գործնական կիրառման արդյունքում առաջացող խնդիրները:

Մինչդեռ, նշված խնդրի առկայության պայմաններում Սահմանադրական դատարանը, ընդամենը սահմանափակվելով Վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի և «Էներգետիկայի մասին» օրենքի 52.1-ին հոդվածի 3-րդ մասի մատնանշմամբ, որոնք համապատասխանաբար վերաբերում են ֆիզիկական և իրավաբանական անձանց



կողմից վարչական դատարան դիմելու իրավունքին, Հանձնաժողովի իրավական ակտերը դատական կարգով բողոքարկելու հնարավորությանը և լիցենզավորված անձի ժամանակավոր կառավարչի կառավարման լիազորություններին, նշել է, որ օրենսդիրը նախատեսել է Հանձնաժողովի ու դրա նախագահի իրավական ակտերի՝ դատական կարգով բողոքարկման իրավական հնարավորություն:

Իմ գնահատմամբ, Սահմանադրական դատարանը չի կատարել Հանձնաժողովի իրավական ակտերը դատական կարգով բողոքարկելու իրավունքի առնչությամբ ամբողջական և համակարգային վերլուծություն, մասնավորապես՝ չի անդրադարձել լիցենզավորված անձի կողմից Հանձնաժողովի նախագահի վարույթ հարուցելու և կանխարգելիչ միջոցառումներ կիրառելու վերաբերյալ որոշումների դատական կարգով բողոքարկելու իրավունքի իրացման ռեալ (իրական) հնարավորությանը, և դրա վերաբերյալ տրված դատական մեկնաբանությունների արդյունքում քննարկվող նորմերի սահմանադրականության հարցին:

Ուստի գտնում եմ, որ Սահմանադրական դատարանի դիրքորոշման բացակայությունը՝ կապված ժամանակավոր կառավարչի նշանակման պայմաններում լիցենզավորված անձի կողմից Հանձնաժողովի նախագահի վարույթ հարուցելու և կանխարգելիչ միջոցառումներ կիրառելու վերաբերյալ որոշումների դատական բողոքարկման իրավունքի իրացման ռեալ (իրական) հնարավորությունների հետ, հանգեցնում է նրան, որ դատական պաշտպանության իրավունքի վերաբերյալ կատարված ընդհանուր և անորոշ բնույթի արձանագրումները դառնում են ձևական: Մինչդեռ, ըստ իս, վիճարկվող դրույթների սահմանադրականությունը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել ոչ միայն օրենքով նախատեսված դատական պաշտպանության միջոցների զուտ առկայությունը, այլև դրանց իրական, գործնականում արդյունավետ իրացման հնարավորությունը: Հետևաբար, նման պայմաններում, երբ Սահմանադրական դատարանը սահմանափակվել է բացառապես օրենսդրությամբ նախատեսված դատական բողոքարկման իրավունքի առկայության փաստի զուտ արձանագրմամբ՝

30


առանց գնահատելու լիցենզավորված անձի կողմից Հանձնաժողովի նախագահի վարույթ հարուցելու և կանխարգելիչ միջոցառումներ կիրառելու վերաբերյալ որոշումների կապակցությամբ դատական բողոքարկման իրավունքի իրացման ռեալ (իրական) և արդյունավետ հնարավորությունը, ապա լիցենզավորված անձի՝ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված իրավունքի արդյունավետ պաշտպանության հարցը շարունակում է մնալ խնդրահարույց: Նման պայմաններում գտնում եմ, որ Հանձնաժողովի իրավական ակտերի դատական բողոքարկման իրավունքի վերաբերյալ Սահմանադրական դատարանի ընդհանուր և անորոշ բնույթի վերլուծությունները չեն կարող դիտվել սույն գործով վիճարկվող «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի և «Էներգետիկայի մասին» օրենքի փոփոխությունների արդյունքում ընդունված կարգավորումների (համապատասխանաբար՝ 2025 թվականի հուլիսի 3-ի թիվ ՀՕ-195-Ն օրենք և 2025 թվականի հուլիսի 3-ի թիվ ՀՕ-196-Ն օրենք) լիարժեք սահմանադրաիրավական գնահատում:

Վերոնշյալ դիրքորոշումների համատեքստում անդրադառնալով լիցենզավորված անձի կողմից Հանձնաժողովի նախագահի վարույթ հարուցելու և կանխարգելիչ միջոցառումներ կիրառելու վերաբերյալ որոշումների դատական բողոքարկման հնարավորությանը՝ գտնում եմ, որ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 9-րդ մասը և «Էներգետիկայի մասին» օրենքի 52.1-ին հոդվածի 3-րդ մասը չեն ապահովում լիցենզավորված անձի՝ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի լիարժեք իրացումը: Թեև ժամանակավոր կառավարչի ինստիտուտի նպատակն է ապահովել լիցենզավորված անձի գործունեության կայուն իրականացումը, այնուամենայնիվ, գտնում եմ, որ լիցենզավորված անձի դատական պաշտպանության իրավունքի ամբողջական փոխանցումը մեկ սուբյեկտի՝ առանց համապատասխան երաշխիքների, հանգեցնում է այդ իրավունքի անհամաչափ սահմանափակման: Նման

պայմաններում գտնում եմ, որ օրենսդրությամբ պետք է ապահովվեն այնպիսի իրավական երաշխիքներ, որոնք Հանձնաժողովի նախագահի վարույթ հարուցելու և կանխարգելիչ միջոցառումներ կիրառելու վերաբերյալ որոշումների բողոքարկման պարագայում կբացառեն լիցենզավորված անձի՝ դատարան դիմելու իրավունքի իրացման կախվածությունը ժամանակավոր կառավարչի հայեցողությունից և կապահովեն այդ իրավունքի ռեալ (իրական) իրացումը:

Այսպիսով, հաշվի առնելով արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի իրացման իրական հնարավորության ապահովման անհրաժեշտությունը՝ գտնում եմ, որ հարուցված վարույթի շրջանակներում լիցենզավորված անձը չպետք է զրկված լինի իր՝ Սահմանադրությամբ երաշխավորված արդյունավետ դատական պաշտպանության իրավունքն իրացնելու իրական հնարավորությունից: Մասնավորապես՝ վարույթի հարուցման պահից ի վեր, լիցենզավորված անձը պետք է ունենա Հանձնաժողովի նախագահի վարույթ հարուցելու և կանխարգելիչ միջոցառումներ կիրառելու վերաբերյալ որոշումների կապակցությամբ դատարան դիմելու հնարավորություն՝ անկախ այն հանգամանքից, որ դատարան դիմելու պահի դրությամբ նշանակված է լիցենզավորված անձի ժամանակավոր կառավարիչ: Հակառակ պարագայում՝ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքով ամրագրված՝ Հանձնաժողովի նախագահի վարույթ հարուցելու և կանխարգելիչ միջոցառումներ կիրառելու վերաբերյալ որոշումների դատական բողոքարկման հնարավորության վերաբերյալ կարգավորումները կկորցնեն իրենց իրավական նշանակությունն ու գործնական արդյունավետությունը:

2.2. Այսպիսով՝ ելնելով վերոնշյալ վերլուծություններից՝ գտնում եմ, որ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 9-րդ մասը և «Էներգետիկայի մասին» օրենքի 52.1-ին հոդվածի 3-րդ մասը համապատասխանում են Սահմանադրությանն այնպիսի մեկնաբանությամբ, համաձայն որի՝ Հանձնաժողովի կողմից լիցենզավորված



անձի ժամանակավոր կառավարիչ նշանակվելու հանգամանքից անկախ՝ պետք է երաշխավորվի լիցենզավորված անձի՝ Հանձնաժողովի նախագահի վարույթ հարուցելու և կանխարգելիչ միջոցառումներ կիրառելու վերաբերյալ որոշումների դատական կարգով բողոքարկման իրավունքի լիարժեք իրացման հնարավորությունը:

ԲԱԺԻՆ III

3.1 «Էներգետիկայի մասին» օրենքի 52.1-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասության վերաբերյալ.

Վերոնշյալ դրույթը, այնքանով, որքանով կանխարգելիչ միջոցառումների կիրառման դեպքում, ի թիվս այլնի, հաշվի է առնում նաև լիցենզավորված անձի կողմից նախկինում կատարված խախտումների քանակը, հաճախականությունը կամ բնույթը, հարկ եմ համարում քննարկման առարկա դարձնել Սահմանադրության 73-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված՝ անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքների և այլ իրավական ակտերի հետադարձ ուժի արգելքի համատեքստում:

Այսպես՝ Սահմանադրության՝ «Օրենքների և այլ իրավական ակտերի հետադարձ ուժը» վերտառությամբ 73-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն:

Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում (ՍԴՈ-649, ՍԴՈ-723, ՍԴՈ-758, ՍԴՈ-881, ՍԴՈ-1000, ՍԴՈ-1061, ՍԴՈ-1142, ՍԴՈ-1224, ՍԴՈ-1326, ՍԴՈ-1437), անդրադառնալով անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքների և այլ իրավական ակտերի հետադարձ ուժի արգելքի սահմանադրաիրավական խնդրին, արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.



«(...) անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքների և այլ իրավական ակտերի հետադարձ ուժի արգելքի սկզբունքը.

- պետական իշխանության նկատմամբ վստահության և իրավական պետության սկզբունքների կարևոր բաղադրատարրերից մեկն է,

- իրավական անվտանգության սկզբունքի հետ մեկտեղ կոչված է ապահովելու հարգանքը լեգիտիմ ակնկալիքների հանդեպ,

- ընդհանուր կանոն է, իսկ իրավական ակտերի հետադարձ ուժով գործողության հնարավորությունը՝ բացառություն ընդհանուր կանոնից, ինչը բխում է մարդու իրավունքների երաշխավորման, իրավակիրառ մարմինների կողմից կամայականությունների կանխարգելման նկատառումներից,

- իրավական որոշակիության սկզբունքի ապահովման կարևոր երաշխիք է, միաժամանակ, այդ սկզբունքից բխում է այն արգելքը, համաձայն որի՝ անթույլատրելի է այն իրավունքների սահմանափակումը կամ վերացումը, որոնք ամրագրվել են նախկինում գործող նորմերի հիման վրա, ինչը կհակասեր նաև մի շարք միջազգային պայմանագրերով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորություններին»:

Վերոնշյալ դիրքորոշումից հետևում, որ օրենքների և այլ իրավական ակտերի հետադարձ ուժի արգելքը հանդիսանում է իրավական անվտանգության կարևորագույն բաղադրիչ, որն ապահովում է իրավունքի գերակայություն, մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների երաշխավորվածություն, ինչպես նաև բարձրացնում է հանրային վստահությունը պետական իշխանության նկատմամբ:

Այս սահմանադրական սկզբունքն իր ամրագրումն է ստացել նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքում, որը սահմանում է, որ նորմատիվ իրավական ակտի գործողությունը տարածվում է դրա ուժի մեջ մտնելուց հետո գործող հարաբերությունների վրա, եթե Սահմանադրությամբ, օրենքով կամ տվյալ



նորմատիվ իրավական ակտով այլ բան նախատեսված չէ¹²: Միաժամանակ օրենսդիրն ընդգծում է, որ Սահմանադրության 73-րդ հոդվածին համապատասխան անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն¹³:

Անդրադառնալով իրավական ակտերի հետադարձ ուժի արգելքին՝ գտնում եմ, որ այդ սկզբունքը սերտորեն առնչվում է իրավական որոշակիության սկզբունքի հետ: Վերջինս ենթադրում է, որ իրավակարգավորումները պետք է լինեն կանխատեսելի, հստակ և հասկանալի, որպեսզի անձը կարողանա իր վարքագիծը դրսևորել գործող իրավական նորմերի հիման վրա՝ ողջամտորեն կանխատեսելով դրանցից բխող իրավական հետևանքները: Դրան ի հակառակ, երբ բացասական իրավական հետևանք առաջացնող նոր իրավակարգավորումը տարածվում է նախկինում կատարված գործողությունների վրա, անձը փաստացի զրկվում է տվյալ պահին իր վարքագիծը իրավաչափ ձևով դրսևորելու հնարավորությունից, քանի որ տվյալ պահին գործող իրավակարգավորումը չի պարունակել համապատասխան սահմանափակում կամ միջամտություն: Ուստի իրավական ակտերին հետադարձ ուժ տալն այն դեպքում, երբ դրանք սահմանում են նոր պարտավորություններ կամ ինքնին վատթարացնում անձի իրավական վիճակը, հակասում են իրավական որոշակիության սկզբունքին: Հետևաբար, անթույլատրելի է այնպիսի իրավական նորմերի հետադարձ կիրառումը, որոնք տարածվում են դրանց ուժի մեջ մտնելուց առաջ ծագած հարաբերությունների վրա և որևէ կերպ առաջացնում են անձի իրավական վիճակի վատթարացում:

Տվյալ դեպքում «Էներգետիկայի մասին» օրենքը, 2025 թվականի հուլիսի 3-ին ընդունված՝ ««Էներգետիկայի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-196-Ն օրենքի 3-րդ հոդվածին համապատասխան, լրացվել է «Սպառողների շահերի պաշտպանության նպատակով կանխարգելիչ

¹² «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մաս:

¹³ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մաս:



միջոցառումների կիրառումը» վերտառությամբ 52.1-ին հոդվածով, որի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենքի 42-րդ հոդվածի 3-րդ, 5-րդ կամ 6-րդ մասերով սահմանված արարքը կատարելու հիմքով վարույթ հարուցելու մասին որոշմամբ հանձնաժողովի նախագահը կարող է կիրառել կանխարգելիչ միջոցառումներ: **Կանխարգելիչ միջոցառումների կիրառման դեպքում, ի թիվս այլնի, հաշվի են առնվում նաև լիցենզավորված անձի կողմից նախկինում կատարված խախտումների քանակը, հաճախականությունը կամ բնույթը:**

2025 թվականի հուլիսի 3-ին ընդունված՝ ««Էներգետիկայի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-196-Ն օրենքի «Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ» վերտառությամբ 4-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվել է, որ նույն օրենքով սահմանված կարգավորումները տարածվում են նաև մինչև նույն օրենքն ուժի մեջ մտնելը թույլ տրված խախտումների վրա:

Այսպիսով, օրենսդրական փոփոխությամբ նախատեսվել է նոր կարգավորում, որի համաձայն՝ Հանձնաժողովի նախագահի կողմից կանխարգելիչ միջոցառումների կիրառման շրջանակում հաշվի է առնվում նաև լիցենզավորված անձի նախկինում կատարված խախտումների քանակը, հաճախականությունը և բնույթը: Միաժամանակ, օրենսդրական փոփոխության անցումային դրույթներով նախատեսվել է դրա տարածումը նաև մինչև օրենքի ուժի մեջ մտնելը թույլ տրված խախտումների վրա: Այսինքն՝ օրենսդիրը նախատեսել է նոր կարգավորման հետադարձ կիրառություն:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ «Էներգետիկայի մասին» օրենքի 52.1-ին հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասության սահմանադրականությունը հարկ են համարում գնահատել Սահմանադրության 73-րդ հոդվածի լույսի ներքո՝ պարզելու համար, թե արդյոք տվյալ դեպքում առկա է անձի իրավական վիճակը վատթարացնող նորմի հետադարձ կիրառություն:

Նախ, գտնում են, որ «Էներգետիկայի մասին» օրենքի 52.1-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կանխարգելիչ միջոցառումներն իրենց բովանդակությամբ և



հետևանքներով լիցենզավորված անձի իրավունքների նկատմամբ առաջացնում են ինտենսիվ միջամտություն: Իսկ այն հանգամանքը, որ այդ միջոցառումների կիրառման հիմքում դրվում են նաև լիցենզավորված անձի կողմից նախկինում կատարված խախտումների քանակը, հաճախականությունը կամ բնույթը, վկայում է այն մասին, որ նոր կարգավորումը փաստացի փոխում է նախկինում դրսևորված վարքագծի նշանակությունը՝ այն կապելով այնպիսի հետևանքների հետ, որոնք նախկինում նախատեսված չէին:

Իսկ մինչև նշված փոփոխությունների ուժի մեջ մտնելը գործող իրավակարգավորման պայմաններում լիցենզավորված անձը չէր կարող ողջամտորեն կանխատեսել, որ իր կողմից թույլ տրված խախտումներն ապագայում կարող են հիմք հանդիսանալ նոր՝ իր իրավունքների նկատմամբ ինտենսիվ միջամտություն նախատեսող կանխարգելիչ միջոցառումների կիրառման համար:


Ելնելով վերոնշյալից՝ գտնում եմ, որ «Էներգետիկայի մասին» օրենքի 52.1-ին հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասությամբ սահմանված կարգավորման (այն է՝ կանխարգելիչ միջոցառումների կիրառման դեպքում, ի թիվս այլնի, հաշվի են առնվում նաև լիցենզավորված անձի կողմից նախկինում կատարված խախտումների քանակը, հաճախականությունը կամ բնույթը) տարածումը մինչև օրենքի ուժի մեջ մտնելը թույլ տրված խախտումների վրա, հանգեցնում է լիցենզավորված անձի իրավական վիճակի վատթարացման՝ թույլ տալով նախկինում կատարված վարքագծի հիման վրա վերջինիս իրավունքների նկատմամբ կիրառել նոր, ինտենսիվ միջամտություն նախատեսող իրավական հետևանքներ (կանխարգելիչ միջոցառումների տեսքով): Նման պայմաններում գտնում եմ, որ «Էներգետիկայի մասին» օրենքի 52.1-ին հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասությունը հակասում է Սահմանադրության 73-րդ հոդվածով ամրագրված՝ անձի իրավական վիճակը վատթարացնող նորմերի հետադարձ ուժի արգելքի սկզբունքին, քանի որ այն լիցենզավորված անձի համար առաջացնում է ինտենսիվ միջամտություն նախատեսող իրավական հետևանքներ:

37

Մինչդեռ նշված հարցի առնչությամբ Սահմանադրական դատարանն իր՝ 2026 թվականի մարտի 12-ի ՍԴՈ-1819 որոշմամբ եկել է այն եզրահանգման, որ «Էներգետիկայի մասին» օրենքի 52.1-ին հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասությունը համապատասխանում է Սահմանադրությանը: Սահմանադրական դատարանը նշված եզրահանգմանը եկել է հետևյալ պատճառաբանությունների հիման վրա.

- «118. (...) Սահմանադրական դատարանն այս կապակցությամբ մեկ անգամ ևս ուշադրություն է հրավիրում նախորդիվ արդեն պատճառաբանված այն եզրակացության վրա, որ [«Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի] 52.1-ին հոդվածով սահմանված կանխարգելիչ միջոցառումներն իրավական պատասխանատվության միջոցներ չեն: Էներգետիկայի բնագավառում իրավախախտումների օբյեկտիվ կողմի նկարագրությունն ու Հանձնաժողովի կողմից դրանց համար կիրառվող պատասխանատվությունը 2025 թվականի հուլիսի 3-ին ընդունված՝ ««Էներգետիկայի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-196-Ն օրենքի ընդունմամբ մնացել է անփոփոխ, ինչը նշանակում է, որ նշյալ օրենքով չի սահմանվել անձի իրավական վիճակը վատթարացնող պատասխանատվություն ենթադրող որևիցե դրույթ, այլ ընդամենը սահմանվել է սպառողների շահերի պաշտպանությանն ուղղված կանխարգելիչ միջոցառումների շրջանակ, որոնցից յուրաքանչյուրի կիրառման համաչափության ապահովման համար անհրաժեշտ է հաշվի առնել լիցենզավորված անձի կողմից նախկինում կատարված խախտումների քանակը, հաճախականությունը կամ բնույթը»,

- «120. (...) Սահմանադրական դատարանը խնդրո առարկա իրավակարգավորումը դիտարկում է ոչ թե որպես օրենքով սահմանված նոր կարգավորում, որի վրա տարածվում են Սահմանադրության 73-րդ հոդվածի 1-ին մասի երաշխիքները, այլ անհատականացման սկզբունքի պահանջներից բխող «խախտողի անձ» ընդհանուր հասկացության կոնկրետացում՝ հաշվի առնվելիք հանգամանքների որոշակի շրջանակի սահմանման միջոցով»:

38


Փաստորեն, Սահմանադրական դատարանը «Էներգետիկայի մասին» օրենքի 52.1-ին հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասության՝ Սահմանադրությանը համապատասխանելու հիմքում հիմնականում դրել է այն պատճառաբանությունը, որ «Էներգետիկայի մասին» օրենքի 52.1-րդ հոդվածով նախատեսված կանխարգելիչ միջոցառումները իրավական պատասխանատվության միջոցներ չեն և, հետևաբար, Սահմանադրության 73-րդ հոդվածի 1-ին մասի գործողությունը չի տարածվում վիճարկվող դրույթի վրա:

Նշված դիրքորոշման առնչությամբ հարկ եմ համարում նշել հետևյալը.

նախ՝ Սահմանադրության 73-րդ հոդվածի 1-ին մասի բովանդակությունը սահմանափակված չէ բացառապես «պատասխանատվություն» սահմանող նորմերով: Սահմանադրական դրույթի բովանդակությունից հետևում է, որ այն վերաբերում է անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքներին և այլ իրավական ակտերին՝ առանց դրանք կապելու միայն պատասխանատվության ինստիտուտի հետ: Այսինքն՝ հետադարձ ուժի սահմանադրական արգելքն ավելի ընդգրկուն է և տարածվում է բոլոր այն իրավակարգավորումների վրա, որոնք անձի համար առաջացնում են անբարենպաստ իրավական հետևանքներ:

Բացի այդ, էական է ոչ թե օրենքների և այլ իրավական ակտերի անվանումը («պատասխանատվություն», «կանխարգելիչ միջոցառում» և այլն), այլ դրանց ազդեցությունն անձի իրավական վիճակի վրա: Ուստի միայն այն հանգամանքը, որ միջոցառումը բնութագրվում է որպես «կանխարգելիչ», ինքնին չի բացառում դրա՝ Սահմանադրության 73-րդ հոդվածի իմաստով վատթարացնող լինելու հանգամանքը: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ կանխարգելիչ միջոցառման կիրառումը հանգեցնում է լիցենզավորված անձի իրավունքների նկատմամբ ինտենսիվ միջամտության, գտնում եմ, որ այն իր էությամբ պետք է դիտարկվի որպես անձի վիճակը վատթարացնող իրավական հետևանք:

Այդուհանդերձ, Սահմանադրական դատարանի դիրքորոշման պարագայում ստացվում է, որ օրենսդիրը կարող է ցանկացած նոր սահմանափակող կամ միջամտող կարգավորում հետադարձ ուժով կիրառել՝ պարզապես այն չորակելով որպես «պատասխանատվություն»: Մինչդեռ, իմ գնահատմամբ, այսպիսի մեկնաբանությունը հանգեցնում է Սահմանադրության 73-րդ հոդվածով ամրագրված երաշխիքների արժեզրկման:

Միաժամանակ անդրադառնալով Սահմանադրական դատարանի այն պատճառաբանությանը, ըստ որի՝ վիճարկվող դրույթը «նոր կարգավորում չէ», այլ ընդամենը «խախտողի անձ» հասկացության կոնկրետացում է, ապա այն, ըստ իս, չի կարող համարվել հիմնավորված:

Նշված պատճառաբանության առնչությամբ հարկ եմ համարում նշել, որ մինչև 2025 թվականի հուլիսի 3-ին ընդունված՝ ««Էներգետիկայի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-196-Ն օրենքով լրացում կատարելը «Էներգետիկայի մասին» օրենքում կանխարգելիչ միջոցառումների կիրառման վերաբերյալ որևէ գործիքակազմ նախատեսված չի եղել: Հետևաբար, իմ գնահատմամբ, օրենսդիրը ոչ թե «կոնկրետացրել» է առկա՝ «խախտողի անձ» հասկացությունը, այլ ստեղծել է նոր իրավական կարգավորում, որի շրջանակում նախկինում կատարված խախտումները ստացել են նոր իրավական նշանակություն՝ դառնալով նոր սահմանափակումների, այն է՝ կանխարգելիչ միջոցառումների կիրառման հիմք:

Ամփոփելով վերոնշյալը՝ գտնում եմ, որ Սահմանադրական դատարանի այն մոտեցումը, ըստ որի՝ իրավական ակտի հետադարձ ուժի արգելքը կիրառելի է միայն պատասխանատվություն սահմանող նորմերի նկատմամբ, և որ վիճարկվող դրույթը նոր չէ, այլ ընդամենը «խախտողի անձ» հասկացության կոնկրետացում է, չի բխում Սահմանադրության 73-րդ հոդվածի բովանդակությունից:

3.2. Այսպիսով՝ ելնելով վերոնշյալ վերլուծություններից՝ գտնում են, որ «Էներգետիկայի մասին» օրենքի 52.1-ին հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասությունը, այնքանով, որքանով կանխարգելիչ միջոցառումների կիրառման դեպքում, ի թիվս այլնի, հաշվի են առնվում նաև լիցենզավորված անձի կողմից նախկինում (մինչև 2025 թվականի հուլիսի 3-ին ընդունված՝ ««Էներգետիկայի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-196-Ն օրենքի ուժի մեջ մտնելու պահը) կատարված խախտումների քանակը, հաճախականությունը կամ բնույթը, հակասում է Սահմանադրության 73-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված՝ անձի իրավական վիճակը վարթարացնող օրենքների և այլ իրավական ակտերի հետադարձ ուժի արգելքի սկզբունքին:

4. ԱՄՓՈՓԻՉ ԵՂՐԱՀԱՆԳՈՒՄ

4.1. Հիմք ընդունելով Բաժին I-ում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ գտնում են, որ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 9-րդ մասը և «Էներգետիկայի մասին» օրենքի 52.1-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը՝ այնքանով, որքանով Հանձնաժողովի նախագահին վերապահում են իրավասություն միանձնյա կարգով լիցենզավորված անձի նկատմամբ կիրառելու կանխարգելիչ միջոցառումներ, հակասում են Սահմանադրության 122-րդ հոդվածին:

4.2. Հիմք ընդունելով Բաժին II-ում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ գտնում են, որ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 9-րդ մասը և «Էներգետիկայի մասին» օրենքի 52.1-ին հոդվածի 3-րդ մասը համապատասխանում են Սահմանադրությանն այնպիսի մեկնաբանությամբ, համաձայն որի՝ Հանձնաժողովի կողմից լիցենզավորված անձի ժամանակավոր կառավարիչ



նշանակվելու հանգամանքից անկախ՝ պետք է երաշխավորվի լիցենզավորված անձի՝ Հանձնաժողովի նախագահի վարույթ հարուցելու և կանխարգելիչ միջոցառումներ կիրառելու վերաբերյալ որոշումների դատական կարգով բողոքարկման իրավունքի լիարժեք իրացման հնարավորությունը:

4.3. Հիմք ընդունելով Բաժին III-ում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ գտնում են, որ «Էներգետիկայի մասին» օրենքի 52.1-ին հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասությունը, այնքանով, որքանով կանխարգելիչ միջոցառումների կիրառման դեպքում, ի թիվս այլնի, հաշվի են առնվում նաև լիցենզավորված անձի կողմից նախկինում (մինչև 2025 թվականի հուլիսի 3-ին ընդունված՝ ««Էներգետիկայի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-196-Ն օրենքի ուժի մեջ մտնելու պահը) կատարված խախտումների քանակը, հաճախականությունը կամ բնույթը, հակասում է Սահմանադրության 73-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված՝ անձի իրավական վիճակը վարթարացնող օրենքների և այլ իրավական ակտերի հետադարձ ուժի արգելքի սկզբունքին:

ԴԱՏԱՎՈՐ՝



Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

«20» մարտի 2026թ.